«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«27» 07 2015թ.

Հաստատում եմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

պետի ժամանակավոր պաշտոնակատար

_____ Հ. Թունյան

ՍՑ-ԳԲԽ-07/15 բողոքը քննող

հանձնաժողովին

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով և ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 19.02.2015թ. թիվ 73-1/771466 գրությամբ ներկայացված «Գոլդեն Մառկետ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 01570292) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հարցը, պարզել ենք հետևյալը.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը

ՀՀ ֆինանսների նախարարությունը 19.02.2015թ. թիվ 73-1/771466 գրությամբ դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ նաև՝ Կենտրոն)՝ խնդրելով ուսումնասիրել «Գոլդեն Մառկետ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն)

գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ նաև՝ Ցուցակ) ներառելու համար:

Վերոհիշյալ գրությամբ ՀՀ ֆինանսների նախարարությունը Կենտրոնին է ներկայացրել ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 04.02.2015թ. ԴՎԱ/200 գրությունը:

2. «Գոլդեն Մառկետ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետը, կարծիք ստանալու նպատակով 25.02.2014թ. թիվ 09/032-340 գրությամբ դիմել է «Գոլդեն Մառկետ» ՍՊԸ-ին, սակայն նամակը «անհայտ» նշումով ետ է վերադարձվել:

Կենտրոնը, «Գոլդեն Մառկետ» ՍՊԸ-ի գտնվելու վայրի իրավաբանական և գործադիր մարմնի ղեկավարի հասցեները ճշտելու նպատակով, 20.03.2014թ. թիվ 04/032-512 գրությամբ դիմել է ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությանը՝ խնդրելով «Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը ներկայացնել միասնական տեղեկանք «Գոլդեն Մառկետ» ՍՊԸ-ի վերաբերյալ:

ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունը 28.03.2014թ. թիվ 3.2/0548-14 գրությամբ ներկայացրել է տեղեկանք, որի համաձայն Ընկերության իրավաբանական հասցե նշվել է «ք. Երևան, Չարենցի 44»-ը, իսկ գործադիր մարմնի ղեկավար Անահիտ Անդիկյանի հասցե նշվել է «ք. Երևան, Չկալովի փողոց, 21 տուն»ը:

Այնուհետև Կենտրոնը 25.02.2014թ. թիվ 09/032-340 գրությունը կրկին ուղարկել է վերոհիշյալ հասցեներով, սակայն կրկին պատասխան չի ստացվել:

«Գոլդեն Մառկետ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԳԲԽ-07/15 բողոքը քննող հանձնաժողովի նիստի օրվա և ժամի մասին, չի ներկայացել վերոհիշյալ հանձնաժողովի նիստին:

3. Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

Պատվիրատուն ՀՀ ֆինանսների նախարարությանը հասցեագրված 04.02.2015թ. ԴՎԱ/200 գրությամբ հայտնել է, որ ՀՀ պաշտպանության նախարարության և «Գոլդեն Մառկետ» ՍՊԸ-ի միջև 21.03.2013թ. կնքված «ՇՀԱՊՁԲ-20/2-1» ծածկագրով պայմանագրի 3200 հատ «Բահ սակրավորի մեծ ԲՍԼ-110» ապրանքատեսակի (այսուհետ նաև՝ Ապրանք) մատակարարման ժամկետը փոխադարձ համաձայնությամբ սահմանվել է 2013թ. 3-րդ եռամսյակը, այլ ոչ թե մինչև 20.12.2013թ.: Ընդ որում, «Գոլդեն Մառկետ» ՍՊԸ-ն 2013թ. 3-րդ եռամսյակում չի կատարել ապրանքի մատակարարումը: Գնորդը Ընկերությանը հնարավորություն է ընձեռել մատակարարումն իրականացնել 2013թ. հոկտեմբեր, նոյեմբեր և դեկտեմբեր (բայց ոչ ուշ քան 20.12.2013թ.) ամիսներին, սակայն Ապրանքը Ընկերության կողմից չի մատակարարվել: Հաշվի առնելով վերոգրյալը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը դիտել է 3.1.6.1 կետի «բ» ենթակետի՝ մատակարարման ժամկետի բազմակի խախտում, և 13.02.2014թ. պատասխանատու ստորաբաժանման առաջարկով միակողմանի լուծել է կողմերի միջև 21.03.2013թ. կնքված «ՇՀԱՊՁԲ-20/2-1» ծածկագրով պայմանագրիը: Բացի այդ, բյուջետային տարին ավարտվելուց հետո գնորդը գործնականում հնարավորություն չէր կարող ունենալ վճարել 2013թ. կարիքների համար նախատեսված ապրանքի դիմաց:

ՀՀ պաշտպանության նախարարությունը ՀՀ ֆինանսների նախարարությանը հասցեագրված վերոհիշյալ գրությամբ հայտնել է նաև, որ առկա են եղել բավարար հիմքեր ՀՀ պաշտպանության նախարարության և «Գոլդեն Մառկետ» ՍՊԸ-ի միջև 21.03.2013թ. կնքված «ՇՀԱՊՁԲ-20/2-1» ծածկագրով պայմանագիրը միակողմանի լուծելու համար:

ՀՀ պաշտպանության նախարարությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԳԲԽ-07/15 բողոքը քննող հանձնաժողովի նիստի օրվա և ժամի մասին, չի ներկայացել վերոհիշյալ հանձնաժողովի նիստին և չի ներկայացրել ոչ կարծիք, ոչ էլ ՀՀ ֆինանսների նախարարությանը ներկայացված կարծիքը հիմնավորող որևէ փաստաթուղթ:

4. ՍՑ-ԳԲԽ-07/15 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՀՀ ֆինանսների նախարարության 19.02.2015թ. թիվ 73-1/771466 գրությամբ ներկայացված «Գոլդեն Մառկետ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից սպառազինության օժանդակ նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՇՀԱՊՁԲ-20/2-1» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգ (այսուհետ՝ նաև Ընթացակարգ):

2. Ընթացակարգի արդյունքում ՀՀ պաշտպանության նախարարության և «Գոլդեն Մառկետ» ՍՊԸ-ի միջև սպառազինության օժանդակ նյութերի ձեռքբերման նպատակով 21.03.2013թ. կնքվել է «ՇՀԱՊՁԲ-20/2-1» ծածկագրով պայմանագիր (այսուհետ՝ նաև Պայմանագիր), որով ապրանքների մատակարարման վերջնաժամկետ է սահմանվել մինչև 20.12.2013թ.:

3. Պայմանագրի նախագծի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով՝ գնման ժամանակացույցով, 1-ին չափաբաժնով նախատեսված 8.000.000 (ութ միլիոն) ՀՀ դրամ ընդհանուր արժեքով 3200 հատ բահ սակրավորի մեծ ԲՍԼ-110 ապրանքատեսակի մատակարարման ժամկետ է սահմանվել **2013թ. 3-րդ եռամսյակը**:

4. 1-ին չափաբաժնով նախատեսված 8.000.000 (ութ միլիոն) ՀՀ դրամ ընդհանուր արժեքով 3200 հատ բահ սակրավորի մեծ ԲՍԼ-110 ապրանքատեսակը Ընկերության կողմից չի մատակարարվել գնման ժամանակացույցով սահմանված ժամկետում, այն է՝ 2013թ. 3-րդ եռամսյակում:

4. Պատվիրատուն 14.02.2014թ. թիվ ԴՎԱ/345 գրությամբ դիմել է «Գոլդեն Մառկետ» ՍՊԸ-ին և հայտնել, որ ՀՀ պաշտպանության նախարարության և «Գոլդեն Մառկետ» ՍՊԸ-ի միջև 21.03.2013թ. կնքված «ՇՀԱՊՁԲ-20/2-1» ծածկագրով պայմանագրի համաձայն՝ «Գոլդեն Մառկետ» ՍՊԸ-ի կողմից 2013թ. ընթացքում պետք է մատակարարվեր Ապրանք, որը չի մատակարարվել, ուստի ՀՀ պաշտպանության

նախարարությունը, հիմք ընդունելով ՀՀ ՊՆ ՆՏԱԴ տեխնիկական ապահովման վարչության 20.01.2014թ. թիվ 21 գրությունը, Պայմանագրի 3.1.6 կետի համաձայն, 2014թ. փետրվարի 13-ին միակողմանի մասնակի լուծել է Պայմանագիրը:

5. ՍՑ-ԳԲԽ-07/15 պաշտոնական ընթացակարգի բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ն, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 19.02.2015թ. թիվ 73-1/771466 գրությամբ ներկայացված փաստաթղթերը, ՀՀ պաշտպանության նախարարության 04.02.2015թ. ԴՎԱ/200 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության և «Գոլդեն Մառկետ» ՍՊԸ-ի միջև 21.03.2013թ. կնքված «ՇՀԱՊՁԲ-20/2-1» ծածկագրով պայմանագիրը և Պայմանագիրը միակողմանի լուծելու հիմքերը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծարմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

ՀՀ կառավարության 2015թ. հունվարի 30-ի թիվ 105-Ն որոշման 7-րդ կետի համաձայն՝ մինչև նույն որոշումն ուժի մեջ մտնելն սկսված և չավարտված գնումների հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գնումների գործընթացը սկսելու պահին գործող իրավական ակտերով:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (մինչև ՀՀ կառավարության 30.01.2015թ. 105-Ն որոշմամբ կատարված փոփոխությունների խմբագրությամբ, այսուհետ նաև՝ Կարգ)

հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ գնումների բողոքարկման խորհրդի ընդունած որոշման հիման վրա մասնակիցը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երեք տարի ժամկետով, եթե ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որի հետևանքով պատճառված վնասի, հաշվարկված տույժի կամ տուժանքի չափը չի գերազանցում գնումների բազային միավորի տասնապատիկը կամ սույն կետի 1-ին, 2-րդ և 3-րդ ենթակետերով նախատեսված վնասը, հաշվարկված տույժը կամ տուժանքը չի վերականգնվել մինչև բողոքարկման խորհրդի կողմից համապատասխան որոշում ընդունվելը:

ՀՀ պաշտպանության նախարարության և «Գոլդեն Մառկետ» ՍՊԸ-ի միջև 21.03.2013թ. կնքված «ՇՀԱՊՁԲ-20/2-1» ծածկագրով պայմանագրի 3.1.6 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել նույն պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է նույն պայմանագիրը:

Պայմանագրի 3.1.6.1 կետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա. մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում,

բ. **բազմիցս խախտվել են Ապրանքի մատակարարման ժամկետները:**

Այսպիսով, «Գոլդեն Մառկետ» ՍՊԸ-ի կողմից Պայմանագրով նախատեսված 3200 հատ բահ սակրավորի մեծ ԲՍԼ-110 ապրանքատեսակը (մեկ չափաբաժին) չի մատակարարվել Պայմանագրով նախատեսված ժամկետում՝ 2013թ. 3-րդ եռամսյակում, որով Ընկերությունը խախտել է Ապրանքի մատակարարման ժամկետը:

Ինչ վերաբերում է Պատվիրատուի այն պնդմանը, որ վերջինս Ընկերությանը հնարավորություն է ընձեռել մատակարարումն իրականացնել նաև 2013թ. հոկտեմբեր, նոյեմբեր և դեկտեմբեր ամիսներին, ապա հայտնում ենք, որ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից չի ներկայացվել սակրավորի մեծ ԲՍԼ-110 ապրանքատեսակի մատակարարման համար Պայմանագրով նախատեսված ժամկետը փոփոխելու որևէ

գրավոր ապացույց, ինչը կհիմնավորեր Ընկերության կողմից Ապրանքի մատակարարման ժամկետների բազմակի խախտումները:

Հաշվի առնելով, որ «Գոլդեն Մառկետ» ՍՊԸ-ի կողմից 21.03.2013թ. կնքված N ՇՀԱՊՁԲ-20/2-1 ծածկագրով Պայմանագրով ստանձնած պարտավորությունը խախտվել է մեկ անգամ, ուստի գտնում ենք, որ «Գոլդեն Մառկետ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվելու բավարար հիմքեր առկա չեն: Ուստի, առաջարկում ենք ՀՀ ֆինանսների նախարարության 19.02.2015թ. թիվ 73-1/771466 գրությամբ «Գոլդեն Մառկետ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը մերժել:

Միևնույն ժամանակ գտնում ենք, որ չեն եղել բավարար հիմքեր ՀՀ պաշտպանության նախարարության կողմից միակողմանի մասնակի լուծելու ՀՀ պաշտպանության նախարարության և «Գոլդեն Մառկետ» ՍՊԸ-ի միջև 21.03.2013թ. կնքված N ՇՀԱՊՁԲ-20/2-1 ծածկագրով պայմանագիրը: Ընկերության կողմից Ապրանքի մատակարարման ժամկետը խախտվել է մեկ անգամ, իսկ ըստ Պայմանգրի 3.1.6.1 կետի՝ Պատվիրատուն իրավունք ունի Պայմանագիրը միակողմանի լուծել, եթե ***բազմիցս խախտվել են Ապրանքի մատակարարման ժամկետները:***

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

Պետի տեղակալ՝ Հ. Այունց

Գնումների աջակցման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի վարիչի ժ/պ՝ Ռ. Մկրտչյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի գլխավոր մասնագետ՝ ՍՑ-ԳԲԽ-07/15 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար՝ Լ. Հովակիմյան